



0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ. փոստ /E-mail/ эл. почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 54 19
☎ (374 10) 54 08 57

№ 5/12.1/51429

<<29>> 05 2014 թ.

<<Դավմա - Սոնա>> կրթա-մշակութային, սոցիալ-բնապահպանական հիմնադրամի նախագահ Ռ. Ղազարյանին

Հարգելի տիկին Ղազարյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր 2014 թվականի մայիսի 13-ի գրության 1-ին հարցի <ա> կետի վերաբերյալ հայտնում եմ, որ <<Կողմ>>, տվյալ դեպքում՝ <<Հայաստանի Հանրապետություն>> ասելով, չպետք է հասկանալ կոնկրետ մեկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, քանի որ Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով <<Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> Օրհուսի Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) կողմ, համապատասխան մարմինների միջոցով ապահովում է պետության պարտավորությունների կատարումը և դրա շրջանակներում պարտականություններ են դրվում կոնկրետ պետական կառավարման մարմինների վրա: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածը սահմանում է, որ <<պաշտոնատար անձիք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար>>:

Որպես օրինակ կարելի է դիտարկել նաև <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքը: Այս օրենքը, այլ տեղեկությունից զատ, տարածվում է նաև Օրհուսի Կոնվենցիայի կարգավորման առարկա հանդիսացող շրջակա միջավայրին առնչվող տեղեկության վրա և սահմանում է ժամկետներ՝ այդ տեղեկությունը պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին տրամադրելու համար: Այսինքն, օրենքի ընդունմամբ պետությունն ապահովում է Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների կատարումը և



միաժամանակ տեղեկության տրամադրման պարտականություն է դնում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

1-ին հարցի <բ> կետի հետ կապված հայտնում եմ, որ նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին ամենավաղ փուլից սկսած հասարակության մասնակցության՝ Կոնվենցիայի դրույթը Հայաստանի Հանրապետությունը, այլ միջոցառումների շարքում, ապահովում է նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, համաձայն որի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության իրականացումը ծանուցվում է ազդակիր համայնքին և քննարկվում է ազդակիր համայնքի հետ:

ՀՀ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի օրակարգում ընդգրկված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչն ընդհանուր առմամբ հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել Օրհուսի Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները:

Մեկ այլ օրինակ է ՀՀ ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածը, որով սահմանված է, որ ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտի նախնական գնահատումը կատարելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն ապահովում է հասարակայնության ծանուցումն սպասվելիք ջրօգտագործման թույլտվության հայտի վերաբերյալ:

ՀՀ բնապահպանության նախարարությունը մշտապես պատրաստ լինելով համագործակցության, աշխատակազմի կողմից մշակվող բոլոր իրավական ակտերի մշակման ամենավաղ փուլից սկսած դրանք տեղադրում է նախարարության պաշտոնական կայքում և սպասում բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների արձագանքին:

1-ին հարցի <գ> կետի, 2-րդ և վերջին հարցի հետ կապված հայտնում եմ, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, իսկ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը ՀՀ օրենսդրությամբ տրված չէ արդարադատության մատչելիության ապահովման իրավասություն և այն բնապահպանական խնդիր չէ: Հավելենք նաև, որ շրջակա միջավայրին առնչվող տեղեկություն ստանալու ենթադրվող խախտված իրավունքների վերականգնման ընթացակարգը նկարագրված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածում, ինչը վերաբերում է արդարադատության մատչելիությանը:

ՀՀ բնապահպանության նախարարությունն իրավասու չէ մեկնաբանելու ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը և որոշելու, թե որ պետական մարմինը պետք է ապահովի արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը և երբ պետք է սկսի այդ համակարգն աշխատել, քանի որ ինչպես արդեն նշել եմ, արդարադատության մատչելիության ապահովումը ՀՀ բնապահպանության նախարարության իրավասություններից դուրս է:

Հարգանքով՝



Է. Փիրովյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

✓ 04/17/2925-14
05.05.2014

0078 Երևան, Հալաբյան 41^ա, հեռ. 380 240
էլ. փոստ yeghishe.kirakosyan@justice.am

«Դալմա-Սոնա» կրթա-մշակութային,
սոցիալ-բնապահական հիմնադրամի
Հես նախագահ տիկին Ռ. Ղազարյանին

Ի պարասխան ՀՀ Նախագահի աշխատակազմի 2014թ.
ապրիլի 14-ի Ղ-533 և ՀՀ ԱԺ գյուղատնտեսական և
բնապահական հարցերի մշտական հանձնաժողովի
2014թ. ապրիլի 10-ի ԳԲ-8 թվակիր գրությունների

Հարգելի տիկին Ղազարյան,

Տեղեկացնում ենք, որ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համար 2011թ. նոյեմբերի 26-ին ՀՀ վարչապետի 1122-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով:

Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են Կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համակարգումը, Կոնվենցիայի ազգային համակարգողի հաշվետվությունների պարբերաբար քննարկումը, պարտավորությունների կատարման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, կատարման գործընթացի գնահատումը և կատարման առնչությամբ պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ առաջարկություններ ներկայացնելը:

Որոշմամբ ստանձնած իր մանդատի իրագործման վերաբերյալ Հանձնաժողովը պարտավորված է տարածելու և հրապարակելու տեղեկատվություն, որն էլ պետք է կատարի Հանձնաժողովը ղեկավարող գերատեսչությունը, այն է՝ ՀՀ բնապահականության նախարարությունը:

????? ????
Apr 30 2014 5:19 PM

Հարգանքով՝

Եղիշե Կիրակոսյան